ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԲՈՒՐԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Բուրաստան համայնք
հեռ. 077101869, e-mail: burastan.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 նոյեմբերի 2016 թվականի N 33 – Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԻ ՀԱՍՏԱՏՈՒՄ

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի պահանջներով՝

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ

Հաստատել համայնքի ավագանու 2016 թվականի նոյեմբերի 29 -ի թիվ 13 նիստի օրակարգը՝

1. Համայնքի վարչական տարածքում 2017 թվականի տեղական տուրքերի եվ վճարների դրույքաչափերը սահմանելու մասին :

/Զեկ.՝ Ա. Թարվերդյան/

2. Բուրաստան համայնքի ղեկավարի աշխատավարձի չափի, համայնքապետարանի աշխատակազմի եվ « Բուրաստանի մանկապարտեզ » համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատակիցների թվաքանակի, հաստիքացուցակի եվ պաշտոնային դրույքաչափերի հաստատումը 2017թ. համար:

/Զեկ.՝ Ա. Թարվերդյան /

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ Կողմ
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՄԱՏՈՒՆԻ Կողմ
3. ԹԱՐՎԵՐԴՅԱՆ ԳՐԻԳՈՐ Կողմ
4. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱԼԲԵՐՏ Կողմ
5. ՀՈՎՍԵՓՅԱՆ ԱԻԴԱ Կողմ
6. ՀՈՎՍԵՓՅԱՆ ԱՆՆԱ Կողմ
7. ՂԱՁԱՐՅԱՆ ՍԵՐԳՈ Կողմ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՇՈՏ ԹԱՐՎԵՐԴՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԲՈՒՐԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Բուրաստան համայնք
հեռ. 077101869, e-mail: burastan.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 նոյեմբերի 2016 թվականի N 34-Ն

ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 18 կետի և <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ և 10-րդ հոդվածների պահանջներով .

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրք սահմանել՝

Հիմնական օբյեկտների համար

1) մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ (կիրառվում է 0.5 գործակից) ----------7500դրամ.

2) սույն կետի «1» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

ա)201-իցմինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար -15000 դրամ,

բ) 501-ից մինչև 1000 քառակուս մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 25000 դրամ,

գ)1001-ից մինչև 3000քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝35000դրամ,

դ)3001-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 50000 դրամ.

ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝
3) մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ -1000 դրամ
4) 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ -1500 դրամ:

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման, աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

1) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ ----------1500 դրամ.

2) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի «1» ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն որոշման 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ սենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.

3) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն որոշման 1-ին կետով սահմանված նորմերը:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրք սահմանել ----------2500դրամ:

4. Համայնքի տարածքում տեղական տուրք սահմանել՝

1) Հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համարյուրաքանչյուր եռամսյակի պետական տուրք սահմանել.

մինչև 26 քմ ընդհանուր մակերեսի դեպքում՝ 5000 դրամ,
26-50 քմ ընդհանուր մակերեսի դեպքում՝ 9000 դրամ,
51-100 քմ ընդհանուր մակերեսի դեպքում՝ 15000դրամ,
101-200 քմ ընդհանուր մակերեսի դեպքում՝ 20000 դրամ,
201-500 քմ ընդհանուր մակերեսի դեպքում՝ 40000 դրամ,
501 և ավելի քմ ընդհանուր մակերեսի դեպքում՝ 80000դրամ:

2) Հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար յուրաքանչյուր եռամսյակի պետական տուրք սահմանել.

մինչև 26 քմ ընդհանուր մակերեսի դեպքում՝ 5000 դրամ,
26-50 քմ ընդհանուր մակերեսի դեպքում՝ 9000 դրամ,
51-100 քմ ընդհանուր մակերեսի դեպքում՝ 15000 դրամ,
101-200 քմ ընդհանուր մակերեսի դեպքում՝ 20000 դրամ,
201-500 քմ ընդհանուր մակերեսի դեպքում՝ 40000 դրամ,
501 և ավելի քմ ընդհանուր մակերեսի դեպքում՝ 80000 դրամ:

5. Համայնքի տարածքում՝

1) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրք սահմանել յուրաքանչյուր օրվա համար ----------100 դրամ՝1քառ.մ համար

2) հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրք ընթացիկ տարվա համար սահմանել ----------150 000 դրամ.

3) խանութներում, կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում, կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրք ընթացիկ տարվա համար սահմանել՝ ----------35 000 դրամ.

4) Համայնքի տարածքում **հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար** յուրաքանչյուր եռամսյակի տեղական տուրքը սահմանվում է.

- մինչև 26 քմ ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 3000 դրամ,
  26-50 քմ ընդհանուր մակերեսի համար՝ 6000 դրամ,
  51-100 քմ ընդհանուր մակերեսի համար՝ 8000 դրամ,
  101-200 քմ ընդհանուր մակերեսի համար՝ 12000 դրամ,
  201-500 քմ ընդհանուր մակերեսի համար՝ 18000 դրամ,
  501 և ավելի քմ ընդհանուր մակերեսի համար՝ 30000 դրամ:

ոչ հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար յուրաքանչյուր եռամսյակի տեղական տուրքը սահմանվում է.

մինչև 26 քմ ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 600 դրամ,
26-50 քմ ընդհանուր մակերեսի համար՝ 1200 դրամ,
51-100 քմ ընդհանուր մակերեսի համար՝ 2400 դրամ,
101-200 քմ ընդհանուր մակերեսի համար՝ 4800դրամ,
201-500 քմ ընդհանուր մակերեսի համար՝ 9000 դրամ,
501 և ավելի քմ ընդհանուր մակերեսի համար՝ 14000դրամ:

6. Համայնքի տարածքում՝ առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ տեղական տուրք ընթացիկ տարվա համար սահմանել՝

1) առևտրի օբյեկտների համար՝ ----------30 000 դրամ.
2) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ ----------50 000 դրամ.
3) բաղնիքների (սաունաների) համար՝ ----------300 000 դրամ.
4) խաղատների կազմակերպման համար՝ ----------600 000դրամ.
5) շահումով խաղերի կազմակերպման համար՝ ----------300 000դրամ.
6) վիճակախաղերի կազմակերպման համար՝ ----------100 000 դրամ:

7. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրք սահմանել՝

1) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ ----------1000 դրամ.
2) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ ----------2500 դրամ.
3) այլ արտաքին գովազդի համար՝ ----------500 դրամ.
4) Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդի դատարկ գովազդային վահանակների 1 քմ-ի համար՝ ----------125 դրամ:

5)Եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը ապա համապատասխան բյուջե պետք է վճարի 50 դրամ՝ այդ գովազդի մակերեսին համապատասխան :

8. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել՝ ----------1 000 դրամ:
Հայաստանի Հանրապետության համայնքների անվանումները ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել՝100000դրամ:

9. Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել....5000դրամ:

10.Սույն որոշման 1-ին, 2-րդ և 3-րդ կետերով սահմանված դրույքաչափերը կիրառված է 0.5 գործակցով:

Տեղական վճարներ՝

11. համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, «շինարարության ավարտական ակտի ձեւակերպման համար, ինչպես նաեւ շահագործման թույլտվություն տրամադրելու համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել՝------- 5000 դրամ

12. տեղական ինքնակառավարման մարմինների տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել՝--------1000դրամ

13. տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար՝ մասնակիցներից վճար սահմանել՝-- 1000 դրամ:

14. տեղական ինքնակառավարման մարմինների կողմից աղբահանությունը կազմակերպելու համար՝ աղբահանության վճար սահմանել՝

1) կենցաղային աղբի համար՝ ըստ հաշվառված անձանց քանակի համայնքում անձնագրային հաշվառման կանոններով ըստ հասցեի հաշվառում ունեցող և (կամ) բնակվող յուրաքանչյուր բնակչի համար՝ ամսական ----------10դրամ:
2) ոչ կենցաղային և խոշոր եզրաչափի աղբի համար՝
ա/ ըստ ծավալի՝ մեկ խորհանարդ մետր աղբի համար -----1000 դրամ կամ
բ/ըստ զանգվածի՝մեկ տոննա աղբի համար --- 3000 դրամ
3).շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրմանհամար տեղական ինքնակառավարման մարմինների կողմից տրամադրվող թույլտվության վճար սահմանել ----------
----------500 դրամ:

Կողմ - 7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ

2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՄԱՏՈՒՆԻ

3. ԹԱՐՎԵՐԴՅԱՆ ԳՐԻԳՈՐ

4. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱԼԲԵՐՏ

5. ՀՈՎՍԵՓՅԱՆ ԱԻԴԱ

6. ՀՈՎՍԵՓՅԱՆ ՀԱՆՆԱ

7. ՂԱԶԱՐՅԱՆ ՍԵՐԳՈ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՇՈՏ ԹԱՐՎԵՐԴՅԱՆ

ՍՈՒՍԱՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԲՈՒՐԱՍԱՆԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ ՀՅՈՒՐՈՒՄ Է • 04200443 • ՀՎ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԲՈՒՐԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Բուրաստան համայնք
հեռ. 077101869, e-mail: burastan.ararat@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

29 նոյեմբերի 2016թվականի N 35-Ն

ԲՈՒՐԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ՉԱՓԻ, ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԵՎ «ԲՈՒՐԱՍՏԱՆԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԻ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԻ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ 2017Թ. ՀԱՄԱՐ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 8-րդ և 26-րդ կետերի , Հայաստանի Հանրապետության << Աշխատանքային օրենսգրքի >> 113-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջներով՝

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ

1. Հաստատել 2017 թ. համար Բուրաստան համայնքի ղեկավարի աշխատավարձի չափը, համայնքապետարանի աշխատակազմի թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը համաձայն հավելված 1-ի :
2. Հաստատել 2017թ. համար « Բուրաստանի մանկապարտեզ » համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը, և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելված 2-ի:
3. Որոշման հավելված 1-ի 3-րդ մասի 4-րդ և 5-րդ տողերը գործում են մինչև 2017թ. հունվարի 29-ը:
4. Որոշման 2-րդ կետը գործում է մինչև « Բուրաստանի մանկապարտեզ » համայնքային ոչ առևտրային կազմակերպության լուծարման գործընթացի ավարտը :

Կողմ - 7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՄԱՏՈՒՆԻ
3. ԹԱՐՎԵՐԴՅԱՆ ԳՐԻԳՈՐ
4. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱԼԲԵՐՏ
5. ՀՈՎՍԵՓՅԱՆ ԱԻԴԱ
6. ՀՈՎՍԵՓՅԱՆ ԱՆՆԱ
7. ՂԱԶԱՐՅԱՆ ՍԵՐԳՈ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՇՈՏ ԹԱՐՎԵՐԴՅԱՆ

Հավելված 1
Բուրաստան համայնքի ավագանու
29. 11. 2016թ. N 35-Ն որոշման

ԲՈՒՐԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ, ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Աշխատակիցների թվաքանակը՝ 15 /2017թ/
2. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը.

ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ	2017Թ. ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ /ՀՀ դրամ/
Համայնքի ղեկավար		196000
1. Հայեցողական պաշտոններ		
Համայնքի ղեկավարի տեղակալ	1	134000
2.Համայնքային ծառայության պաշտոններ		
1.Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար /1.2-1/	1	134000
2. Համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ /2.3-1/	1	118000
3.Համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ /3.1/	1	101000
4.Համայնքապետարանի աշխատակազմի առաջին կարգի մասնագետ /3.2-1/	1	100000
3.Քաղաքացիական աշխատանք		
1.Գործավար	1	72751
2.Սպորտկազմակերպիչ /Կրթության ,մշակույթին սպորտի հարցերով պատասխանատու/	1	110 000
3.Գրադարանավար	1	72751
4.Մշակույթի տան տնօրեն	1	77904
5.Գեղմասվար	1	72751
4.Տեխսպասարկման անձնակազմ		
1.Օպերատոր	1	90000
2.Պահակ	1	80000
3.Հավաքարար	1	72751
4.Այգեպան	1	90000
ԸՆԴԱՄԵՆԸ		1521908

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ /Ա. ԹԱՐՎԵՐԴՅԱՆ/
/ստորագրություն /

Հավելված 2
Բուրաստան համայնքի ավագանու
29. 11. 2016թ. N 35-Ն որոշման

<< ԲՈՒՐԱՍՏԱՆԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ >> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. *Աշխատակիցների թվաքանակը՝* 3 */2017թ/*
2. *Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը.*

ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	*ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ*	*2017Թ. ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ /ՀՀ դրամ/*
Տնօրեն	*1*	*92000*
Դաստիարակ	*1*	*80000*
Պահակ	*1*	*77904*
ԸՆԴԱՄԵՆԸ	*3*	*249904*

Կ.Տ. ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ /Ա. ԹԱՐՎԵՐԴՅԱՆ/
/ստորագրություն /